Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1809

232·9
Գ - 55

2010

1 op

[illegible]

[illegible]

Су Солма

232.9
Զ-55

# ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
# ԶԵՆՈԲԱՅ
ՍՐԲՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՍԱՑԵԱԼ Ի ՄԵԾԻ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԱՒՈՒՐՆ

ԸՆԴԴԷՄ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՉԻ

ԱՆԱՒՐԷՆ ԱՇԱԿԵՐՏԻ

---

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՅԱԿՈԲԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՕԼՍՈՅ

---

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՉԱՄՈՒՌՃԵԱՆՑ

ՅԻՒՍԻՒՔԻՏԱՐ

1855

75207-Ա.Հ.

2001

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

64-86

ՃԱՌ

# Ի ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆ ՅՈՒԴԱՅԻ

Մինչդեռ անդէն իսկ ՚ի խորհրդեանն էին քահանայապետքն, թէ զի՞նչ պատճառ գտցեն, որով կարասցեն սպանանել զՅիսուս ։ Եւ ահա Յուդա մի յերկոտասանիցն եկն եհաս, եւ լռեցոյց զնոսա . քանզի այսպէս նոցա թուեցաւ, թէ իբրեւ գդեռ լռեալ եկեալ է . զի զխորհուրդն նենգութեան նոցա երթեալ գուշակեաց (1)։ Իսկ իբրեւ եբաց զողն զբերանն, եւ սկսաւ խօսել ընդ նոսա, եթէ զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ՚ի ձեռս ձեր, հիացան զարմացան քահանայքն եւ ոչ կարէին հաւատալ, եթէ արդարեւ ճշմարիտ եւ ստոյգ խօսի զբանն ։ Իսկ իբրեւ հաւատացոյց երդմամբ եւս, զի թէ տացեն նմա երեսուն արծաթի, մատնէ նոցա զվարդապետն, առաւել զարմացան, զի ընդ-

խորհրդոյն եկն եհաս կատարիչ խորհրդոյն ․ համարեցան քահանայապետքն անմիտք , թէ իբրեւ յաստուծոյ իմն եղեւ յաջողութիւն իրացըն վասն չհաւատալի գալստեանն Յուդայի , թէ զի՞րդ յանկարծակի եկն դիպեցաւ 'ի խորհրդեանն ։

Իսկ դու Յուդա՝ վասն է՞ր մատնես զվարդապետդ 'ի ձեռս թշնամեացն , զի չարչարեսցեն եւ թշնամանեսցեն , եւ զի 'ի խաչ իսկ հանիցեն , զի՞նչ չար գիտես զվարդապետէդ , զի այդչափ ձեպեալ ես յանխնայ 'ի մահ մատնել ․ մի՛ թէ արդեւք ինչ զաւրութի՞ւնս ոչ ետ առնել քեզ՝ որպէս այլոց աշակերտացն ․ մի՛ թէ զհիւանդս ո՞չ բժշկէիր , կամ զայսահարս ո՞չ առողջացուցանէիր , զի դու ինքն չար էիր քան զայսահարս ․ մի՛ թէ զդեւս ո՞չ հանէիր , իբրեւ 'ի քեզ լեգէոն մտեալ բնակեալ կայր ․ մի՛ թէ հազարապետ եւ տնտես ո՞չ արար ըզքեզ (2) , իբրեւ գիտէր հանապազ զգողութիւն քո ․ մի՛ թէ զքսակն ինքնին ո՞չ ետ 'ի ձեռս քո , իբրեւ տեղեակ էր ագահող եւ կծծի բարուցդ քոց ․ մի՞ թէ ընդ առաքեալսն ո՞չ ունէր զքեզ ․ իբրեւ հասեալ էր 'ի վերայ , թէ մատնելոց ես զնա ․ մի՛ թէ զաթոռ դատաւորութեան ո՞չ էր խոստացեալ քեզ , իբրեւ գիտէր թէ 'ի դատաստան մատնելոց ես զնա ։

Արդ՝ ընդէ՞ր մատնեցեր զնա 'ի խաչ . զայն՝ որ այնչափ բարիս կարդեաց առաջի քո . այլ թէրևս իբրև ծերացար 'ի վարդապետութեանն, գիտէիր արատ ինչ յուսմանն, իսկ կաշառս ընդէ՞ր առեր . նոյնպէս առանց կաշառոյ մատնես զնա 'ի մահ . և ահա աւրհնէին զքեզ ըստ աւրինացն :

Եւ դուք քահանայք՝ ընդէ՞ր ո՛չ հարցանէք զՅուդայ, թէ վասն է՞ր կաշառաւք մատնես զվարդապետն . թէ աւրինադէտք էք, և աւրինաց վարդապետք : Աւրէնքն կաշառաւք զոք ոչ հրամայէ սպանանել . թէ կաշառովք սպանանէք զոք, արհամարհողք աւրինացն գտանիք . եթէ Յուդայի դողոյ հարկ ինչ 'ի վերայ կայր վասն կաշառաց մատնել, ձեզ ևս զի՞նչ աւգուտ էր, զի երեսուն արծաթոյն մեղս անճառելիս շահեցայք անձանց ձերոց . զի թէ մոլորեցուցիչ ժողովրդեանդ է՝ որպէս Յուդայն ասաց, ահա թէպէտ և նա ո՛չ կամի մատնել, աւրէնքն իսկ ունէին, և մատնէին զնա 'ի մահ : Թէ մոլորեցուցիչ ժողովրդեանդ է, Յուդայի զկաշառս զի՞ մեք տայք . վասն է՞ր եթէ և իբրև աւրէնս գիտէք, և ո՛չ իբրև զաւրինապահք կամիք սպանանել . արծաթոյ ծախք վասն էր լինէին ձեզ ընդ այն՝ որ զայգն և զառաւաւտն առ ձեզ

առնէ . կամ զՅուդա իսկ զի՞ աղաչէք , զի մատնեսցէ զնա ձեզ . ո՞չ ապա իսկ առ ձեզ նստէր հանապազ , և ուսուցանէր ՚ի տաճարին :

Եւ քահանայապետքն՝ որք խնդացին ընդ գալուստն Յուդայի , ոչ եթէ ո՛չ կարէին ունել զայն՝ որ ՚ի գանձանակին բազում անգամ մտանէր ՚ի տաճարին , և խօսէր ընդ նոսա . այլ վասն այնր ուրախ եղեն ընդ գնալն . զի գտին նովաւ բարիոք տալ պատասխանի ժողովրդեանն . քանզի մինչև էր նորա երթեալ , կասկածէին ՚ի ժողովրդենէն , թէ գուցէ առ նախանձու զնա սպանանիցեն : Իսկ իբրև եկն Յուդաս առ նոսա՝ քակեցան ՚ի վերին երկեաց ՚ի նախանձուէն՝ զոր ունէին ՚ի ներքս ՚ի սիրտս իւրեանց . քանզի պատրէին զսիրտս ժողովրդեանն ՚ի դատաստանին Յիսուսի , և ասէին . թէ քա՛ջ գիտէ նախ քան զՅուդա զխորհրդակիցն իւր , զոր վասն ճշմարտութեանն հալածական արարեալ . այս Յուդաս վասն հաւատարմութեանն քսակակալ էր նորա . սա եկն , և մատնեաց զնա մեզ ՚ի մահ :

Ո՜վ Յուդայ՝ որ ճեպեալ ես առնուլ զերեսուն արծաթին . և ՚ի քահանայիցդ ո՞չ պատկառիս վաճառել զանմեղ անձն ՚ի սպանումն .

և այդ երեսուն արծաթդ լո՞ւ էր քան (3) զոր ունէիր. կուրացոյց ուրեմն արծաթդ զմիտսդ ՚ի պատճառս ագահութեան. և զարծաթդ իսկ կորուսանես, և ո՛չ իմանաս. Հազարապետ էիր՝ և առաքեալ՝ և մեծ քան զՅովհաննէս՝ որ մեծն էր քան զամենայն ՚ի ծնունդս կանանց, և կամեցար զտէրն քո՝ գնոց վաճառել. այլո՞ց ես զմեծութիւնդ քո՝ զոր ունէիր. զի՞նչ չար արար քեզ. ո՞չ ահա պարգևեաց քեզ աթոռ, կամ զի՞նչ բարի ո՛չ արար քեզ. արար զքեզ դատաւոր ՚ի ժամանակի, յորում գալոց է նա զամենայն ազգք. ո՞չ ահա խոստացաւ քեզ ուտել և ըմպել ՚ի սեղան արքայութեան, ո՞չ ահա ետ քեզ իշխանութիւն հանելոյ զդևս՝ և բժշկելոյ զհիւանդս: Արդ՝ ընդէ՞ր մոռանաս և կորուսանես զմեծութիւնդ ընդ երեսուն արծաթոյ, և ո՛չ կարես գտանել. ահա թէ լեալ էր քեզ կարասի ժողովել ՚ի ժամանակի՝ յորում առաքեաց զքեզ բժշկել, առաւել քան զամենայն զանձ տաճարին ժողովեալ էր քեզ գանձս. և թէ յայնժամ ո՛չ կարէիր առնուլ յերկիւղէ միւսոյ առաքելոյն՝ որ լինէր քեզ ուղէկից, այժմ թէ խնդրեալ էիր քեզ ժամանակ, և երթեալ էիր ՚ի քաղաքս Հրէից և հեթանոսաց, և բժշկութեամբ՝ զոր

առնէիր անդ , որչափ և կամէիր , ժողովեալ էր քեզ արծաթ և ոսկի ։

Զորս Յուդայ առ քահանայապետսն , զի վասն երեսուն արծաթոյ մերկացաւ յամե֊նայն մեծութենէ . զի կալցէն զպիրքն և փոր֊ձեսցիք . քանզի Ճեպեալ էին զգործն կատարել . եառուն վաղվաղակի զարծաթն՝ զոր խնդրեացն . զի մատնեսցէ նոցա զայն՝ զոր նոքա խնդրէ֊ին . որում իշխանութիւն և փառք՝ յաւի֊տեանս ժամանակաց . աւրհնեալ ամէն ։

## ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ՅՕՐԻՆԱԿԷՆ

(1) յօր . զգուշակեսցէ ։
(2) յօր . քեզ ։
(3) յօր . քեզ զայն ։

# ԵՐԱՆԵԼՒՈՅՆ

## ՓԻԼՈՔՍԵՆՈՍԻ ՆԱԲՈՎԿԵՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՅՆ

# ԵՓԵՍՈՍԻ

## Ի ԽՆԴՐՈՅ Տ. ԿՈՄԻՏԱՍԱՅ

# ՀԱՅՈՑ

## ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ստորագրութիւն իրացս եղելոց՝ յորոց պահանջեցեր յինէն ո՛վ սիրելի եղբայր և նախանձաւոր ուղղափառութեան հաւատոյ, զի ապրեսցիս աննախանձ 'ի հաղորդութենէ ուրացողաց ճշմարիտ հաւատոյն. և որք անգիտանան, ծանիցեն՝ որպէս թէ խորշեսցին 'ի նոցանէ՝ նմանապէս կորնչել ընդ Պաւղոսի գրեցելոցն. թէ ոչ միայն որ գործիցենն, այլ և որ կամակից լինին գործողաց տացեն զնոյն վրէժս դատաստանի. քանզի որ առնեն զամբարշտութիւն և զպղծագործու-

թիւն . նա՛ և զամբարշտեալսն և զպղծագործսըն թըշնամի և ատելի համարեսցին . յիշելով զԴաւթայն . զատելիս քո տէր ատեցի . և 'ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ ։

Արդ՝ ինձ պատմութիւն՝ որ առաջիկայ անցանել բանիւ , նախ՝ Աստուծոյ ահագին սպառնալիք դատաստանին գործեցին յորդորումն . և զի մի՛ պարտաւորիցոյց թագուցանել 'ի քումմէ սիրոյդ ստուգապէս կամեցողէդ ճանաչել զճշմարտութիւն իրացդ ։ Երկրորդ անգամ՝ զի ոմանց հպարտութիւն և լեզուաց յանդգնութիւն , որք ո՛չ երկնչին զչարն բարի ասելով , և ո՛չ զվայն ճանաչել զխաւարն լոյս դնելով , և զդառն՝ քաղցր . զի ըմբռնեսցին յանհրաժեշտ պատուհասէն՝ յԱստուծոյ բարկութենէն ։ Երրորդ անգամ՝ զի որ յիմարաբարն առնեն պատասխանի՝ թէ յառաջ ժամանակաւք , և անգիտանամք զգործեցեալն , միանգամայն և զգործողսն , վասն այնորիկ անպարտ եմք 'ի մեղաց , թէպէտ և հաղորդեմք , յանդիմանեալ կշտամբեսցին և ծանիցեն զկորուստ անձանց՝ յայնպիսի ընդունայնաքան պատասխանոյն ։ Եւ ինձ առ այսոքիւք ոչ ինչ են դժուարագիւտ խնդիրք ցուցման . քանզի բաւական են լոկ միայն ամբարըշտական գործոց եղելոց պատմութիւնք ի-

բաքանչիւր ումեք առաջի կացուցանել զգիտութիւն ճշմարտութեան. յորում եթէ սուղ ինչ ճաճանչ զաստուածպաշտութեանն և զջերմութիւն նուազ գիտութեան Քրիստոսի հաւատոցն կացցէ՝ ծանուցեալ վաղվաղակի. զի թէպէտ և անգիտութեամբ երբէք ընդ այնպիսի հայհոյչացն 'ի հաղորդութիւն եկեալ, այնուհետև իբրև 'ի միջոյ հրոյ 'ի բաց վազեսցեն զնոսա նզովելով, և ընդ խաչահանուան Փրկչին Քրիստոսի գթելով. քանզի յաղագս այսպիսեացս Պաւղոս առաքեալն Քրիստոսի՝ յառաջագոյն մարգարէացեալ ասաց. վերստին 'ի խաչ հանեն զորդին Աստուծոյ. և դարձեալ խայտառակեն. այսինքն՝ ըզ հաւատս նորա կործանել. իսկ եթէ որք ապականեալ միտս և անփորձս 'ի հաւատս, ոչ միայն պատմեալք բաւական լիցի ածել զայնպիսին 'ի գիտութիւն ճշմարտութեան, և յամբարշտացն 'ի բաց զատանել:

Բայց ապա այսուհետև 'ի խոստացելոյն եկեսցուք. յորում և դու ինձ կամակից լինելով՝ ջերմագոյն և անզրաւս զլսելիսդ մատուսցես, զի կարասցես զերայս զճշմարտութիւնն ընտրել, և զնա անմեղադիր 'ի պարտեաց առնել, եթէ անգիտանալ ինձ թուեսցին միւս անգամ 'ի ձեռն բանիցս կամ

դրոց, անդանդաղաբար հարցանել, վասն զի քեզ կարի զգուշալի, և մեզ ոչ ինչ դանդաղելի, զիմաստասէր հարցուածս քոյ Աստուածասէր միտացդ բժշկել. արդ՝ այս ինչ է զոր հանդերձեալ եմ պատմել։

Եւստորիոս ումն անուն՝ եղեալ եպիսկոպոս քաղաքին Կոստանդնուպաւլսոյ, 'ի ժամանակըս ճշմարիտ և ուղղափառ թագաւորին Թէոդոսի՝ զոր սնուցանէր եկեղեցի, և մեծապէս հռչակեալ փառաւք ընդ ամենայն աշխարհս անուանի գործէր։ Սա՝ որ մինչդեռ ժամանակաւք զիշխանութիւն քահանայութեան առեալ էր, ոչ ինչ թերութիւն երևեցոյց յուսման վարդապետութեան հաւատոյ եկեղեցոյ, բայց քանզի յղացեալ ունէր յաղանդոյ զծընունդն Պաւղոսի Սամոստացւոյ՝ զսերմն ընկալեալ յերկուց ապականչաց դայլոց՝ 'ի Թէոդորէ (1) սուտանուն եպիսկոպոսաց կոչեցելոց. առ սակաւ սակաւ սկսանէր 'ի լսելիս ժողովրդեանն արկանել ծածկաբար. քանզի չևևս կարծէր կարել կատարել զառաջարկութիւն չար խորհրդոյն իւրոյ. իսկ յորժամ զաւրացեալ և բռնացեալ՝ զոր ինչ ձեռնարկեսցէ բաւական կարծելով զանձն իւր 'ի գլուխ հանել, այ-

նուհետև զուրացութիւն ճշմարիտ հաւատոյն՝ իւրով ժանտաբուղխ և դիւական բանիւք յայտնապէս առաջի ամենեցուն բարբառէր զհայհոյութիւնն ։

Յայնժամ մեծապէս սգացեալ եկեղեցւոյ , թէ զորպիսի պատերազմող և զհովիւ Քրիստոսական հաւտին ուսոյց հայհոյիչ բանսարկուն . բայց վասն զի միւս ևս այլ աճեցեալ զարգանայր յեկեղեցւոջն 'ի սրբոյ Հոգւոյն յառաջգիտութենէ՝ զսա պատրաստեալ առ 'ի պարտութիւն սատանայի սպառազինութեան՝ Կիւրեղիոս անուն կոչեցեալ՝ Աղեքսանդրացւոց քաղաքին քահանայապետ , սովաւ եկեղեցւոյ սրբոյ տրտմութիւն և պատերազմ շիջաւ . քանզի ծանուցեալ զՆեստորի թիւր վարդապետութիւնն 'ի նոյն գրելոյ առ ինքն՝ և Կիւրեղ գրէ փութացեալ վշտակից սիրով դաղարեցուցանել զնա յամբարիշտ հայհոյութենէն , որ ոչ միանգամ՝ այլ և երկիցս և երիցս , և բազում անգամ զայս առնելով , և տեսեալ զնա յամբարշտութիւն եկեալ՝ ընդդիմակայ թուղթս գրելով ուղղափառ հաւատոյն՝ և ամենեցուն առաջնոց վարդապետաց սրբոյ եկեղեցւոյ . որոց զժամանակս իւրեանց ուղղափառութեամբ վարեալք առ բոլորեցունց վարդապետն ճշմա-

րիտ խոստովանութեամբ հասին ։ Իսկ Կիւրեղ ոչ կարաց համբերել, զի մի՛ պատուհաս ՚ի լռութենէն կրեսցէ՝ տեսանելով զհաւատն գաղանակուր , դարձեալ գրէ առ ՚նա այնուհետև խստագոյնս , զի գոնէ այնպէս կարասցէ ապրեցուցանել զնա , և զսերմանեալն ՚ի նմանէ զչար որոմանն զսերմանիսն յոմանց լսելիս՝ խերով բանիւքն քաղեալ յերկոցունց կողմանց՝ դեղառին և դեղատուեցելոյն փրկութիւն գործել ։ Իբրև զոչինչ դատեալ ըստ նմանութեան ողոքական բանիցն՝ հարկաւորի այնուհետև գրել առ նոյն ինքն երանելի Թագաւորն վասն նորին ՚Նեստորի ։ Թէ որպէս՝ արտաքոյ ճշմարտութեանն ուսուցանէ և կործանէ զխոստովանութիւն սրբոյ եկեղեցւոյ , և զաւանդութիւն առաջնոց հարցն խնկըլանէ սրբոյ եկեղեցւոյ.քարոզողաց ։ Եւ զի մի՛ կարաւտեալ ոք զսորա հայհոյութիւնս յայլմէ լսել , կանխեալ ասացից կարճառաւտիւք սուղ ինչ ։

Ոչ է ասէ արժան և պարտ զՄարիամ սուրբ կոյսն՝ Աստուածածին խոստովանել , այլ մարդածին . և ոչ զխաչեալն՝ Քրիստոս Աստուած , այլ տաճար եղեալ Բանին Աստուծոյ , և զԲանն ոչ խոստովանել մարմին եղեալ՝ ըստ աւետարանչին աւանդութեանն .

ոյլ 'ի մարմնի բնակել՝ զուգապատիւ զնա կամեցեալ ցուցանել, կամ նուաղեալ ինչ մեծագոյն միում 'ի սրբոյն և 'ի Հոգեկիր արանցն ։ Բազում և այլ Հայհոյութիւնս խաւսեցաւ․ զորս յորժամ զսորա զաղանդակացն զբանս 'ի մէջ բերցուք, պատմեսցուք զբովանդակն․ բայց այժմ 'ի ձեռպեալն դիմեսցուք ։

Արդ՝ վասն զի դրեալ երանելոյն Կիւրղի առ Թագաւորն զՀամբաւն և զլուր բանիցն խոստովանութեան, ոչ ինչ սակաւ անդուստ 'ի քաղաքն հնչէր 'ի լսելիս նորա յաղագս Թիւր վարդապետութեանն Նեստորի զոր յեկեղեցւոջն քարոզէր ։ Կոչէ յանդիման զնա, և յառաջագոյն խաւսի ընդ նմա առանձին բանս իմաստութեան ըստ որում վայելէր իւր Թագաւորութեանն, զի զշարժեցեալ խոստովանութիւնն 'ի նորաձայն բանիցն նորա վարդապետութենէ դադարեցուսցէ․ զի խրատ տալով ամենեցուն ուղղափառաց վարդապետացն՝ զՀետ երթեալ աւանդութեան Հաւատոցն ըստ որում և նախագոյնքն ասացին, կամէր զծրփեալ նաւն եկեղեցւոյ յանկարծահաս ալեացն՝ անդրէն յառաջին նաւահանգիստն Հաստուցանել, և չՀաւանեալ սորա 'ի բաց դառնալ 'ի մոլար գիտութենէ յաղագս մտաց սատանայական ամպարՀաւանութեանն, Հայցէ 'ի

Թագաւորէն ժողովելոյ հրամանս տալոյ լինել․ զի երթեալ արասցէ պատասխանի ամենեցուն՝ որ ընդ դիմասցէն 'ի նմանէ խաւսեցելոցն․ 'ի կորովութիւն բանիցն յուսալով՝ ճշմարտութեանն յաղթել կամեցեալ հաւատոյն ։

Յայնժամ հրովարտակ արարեալ աստուածաշնորհ Թագաւորին Թէոդոսի ամենայն ուրեք առ եպիսկոպոսունս նշանաւորս․ զի միաբանութեամբ և առանց յապաղելոյ ամենեքեանքն յԷփեսոս հասցեն, զի զաւանդութիւն նախահարցն՝ զգանձն ճշմարիտ հաւատոյն զգուշութեամբ պահեսցեն ։ Եւ հըրամանն վաղվաղակի կատարէր․ և ժողովն հասանէր փութով 'ի ճառեցեալ տեղին՝ յիւրաքանչիւր տեղւոջէ վկայ լինել ճշմարտութեանն՝ և ընդ ստութեանն պատերազմելով․ որոց գլուխն և առաջնորդ երանելին Կիւրեղիոս ։ Եւ ՙՆեստոր հրաժարէր զերթալն առ 'ի պատասխանի առնել Կիւրղի և բովանդակ ժողովոյն, պատճառս դնելով Թագաւորին՝ նենգ գործելոյ նմա միաբանութեանն զի ըմպանցի 'ի ճանապարհին, որ և ո՛չ 'ի խորհուրդ ժողովոյն անկեալ երբէք․ քանզի կարծէր 'ի խորհրդոց սրտին ծփելոյ յինքեան յերկուց ամբարշտական մտածութեանցն ըմբռնեալ շարժէր 'ի միաբանութիւն ժողովոյ

հասանել, և զսերմանեալն 'ի բազմաց լսելիս՝ զպիղծ հայհոյութիւնն ուրանալ և հայհոյել առաջի ամենեցուն՝ ո՛չ հաւանէր վասն խորոխտ և աստուածամարտ կամացն, և պատասխանիւք յառաջ գալ կամկածէր, զի մի գուցէ 'ի պարտութիւն մատնեսցի. քանզի որում նոյն ինքն թուի լինել՝ ճշմարտութիւնն ճշմարտութեանն սուտ է. և բանաւորն անբան լինի: Նուծանէ ապա թագաւորն և մեծի Գուլթի փոխանակ թէոդոս զպատրուակեալ կեղծաւորութիւնն, որքունն զաւրականաւք 'ի ժողովն պատրաստէր զնա զգուշութեամբ հասուցանել. ո՛չ գտեալ այնուհետեւ պատճառս ինչ, թէպէտ և ո՛չ իւրովք՝ գայ յՆիկիոս. և մտեալ յապարանս իւր՝ որ անդ կայէին, հրամայեաց զգուշութեամբ պահել զդրունսն, կարծեցեալ ճշմարիտ լինել զստութիւնն՝ զոր առ թագաւորն ասաց. վասն զի ոմանք յեպիսկոպոսացն՝ որ 'ի կողմանցն արևելից՝ որ յառաջագոյն ըմբռնեալ էին 'ի թիւրութենէ բանից նորա, և նախապատիւ զմարմնաւոր սիրելութիւնն քան զճշմարտութիւնն արարեալ թուում էին երեսուն և երեք, որպէս նոյն ինքն յիշատակարանքն՝ պատմեն, և զատուցեալք 'ի միաբանութենէ Կիւրղի՝ և այ-



Гос. Библиотека
ЗШUՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
64-86

լոց եպիսկոպոսացն, առ ՙՆեստոր դիմեն յապա-
րանսն՝ աւգնականք նմա կամեցեալ լինել. որք
յաստուածային վճռոյն յառաջագոյն յամե-
նայն աւգնականութենէ մերկացեալք, մարդ-
կային զաւրութեամբն Աստուծոյ յաղթել
կամէին. և յերկոցունց կողմանցն հաւատոյն և
անհաւատութեան առ միմեանս սաստիկ պա-
տերազմէին: Յայնժամ ճշմարտութեան կող-
մըն որոյ էր գլուխ Կիւրեղ Աղեքսանդրացի
առաքէ առ ՙՆեստոր երիս ոմանս 'ի պատուա-
կան արանցն եպիսկոպոսացն, զի առ միաբա-
նութիւնն եկեալ խնդրեսցուք զերան, յորոյ
յաղագս ժողովս եղև: Եւ նորա պատուիր-
եալ զաւրականացն՝ մի՛ ումեք թողացուցանել
'ի ներքս մտանել, դարձան անդրէն ոչինչ
պատասխանի առեալք, զոր ասացեն առա-
քողին, բայց սակայն հարկաւորեալք լինէ-
ին երկրորդ և երրորդ անգամ զնոյն առնել
ըստ հրամանի կանոնաց. բայց երթեալքն
որպէս յառաջնումն և յերկրորդումն՝ առանց
պատասխանւոյ դառնային. և եկեալ ասէին
թէ՝ ումեք չէ՛ հնար զնա տեսանել:

Եւ փութացեալ ժողովոյն զորչ համար հա-
թիւնն և զստամբակական բանութիւնն ՙՆես-
տորի, զի և բանիւ անգամ արժանի ոչ արար
պատասխանւոյ. ապա հրամայեցին բերել ԵՂ

թուղթ երանելւոյն Կիւրղի, զոր առ նա խնամաբար և եղբայրաբար առաքեալն էր. և ըզ Նորուն՝ Նեստորին՝ որ ընդ դէմ գրեաց լի բազում հայհոյութեամբ, և զայլս ուղղափառաց զբանս՝ որ վասն հաւատոյ գրեալն էին. և զայնս Կիւրղին միաբան ամենեցուն, իսկ ՝Նեստորին՝ ընդ դէմ ամենեցուն, և հակառակ նոցին և ամենայն գրոց սրբոց: Յայնժամ ՚ի վեր առեալ զսուրբն՝ որ մինչև ցորոշումն շնչոյ և մարմնոյ հատանէ՝ բանն Աստուծոյ, կարէին զնա ընդ մէջ, և զպատիւ քահանայութեանն ՚ի բաց բառնային. և առաքեն յերկոցունց կողմանցն թուղթս յԵփեսոսէ առ թագաւորն:

Յոյժ վտանգ ոչ դուզնաքեայ կայր ՚ի վերայ ուղղափառ կողմանն. քանզի արգելեալք լինէին թուղթք գրեցեալք ՚ի սոցանէ առ թագաւորն հասանել. վասն զի՝ որ մերձ լեալն էին Նեստորի յարքունիսն, և դեղեալք յոսկւոդոյ նորա, հրաման ետուն զամենայն նաւահանգիստս պահել, և զամենայն նաւաքննել. զի եթէ գուցէ ոք թուղթ ունելով առ թագաւորն բանիւ ժողովոյն ուղղափառացն և Կիւրղի ՚ի բաց հանիցեն բռնութեամբ: Իսկ զՆեստորի կողմանն ինքեանք թղթամատոյցք լինէին առ թագաւորն, և

գրեալքն բազում գովութեամբ լինէին ՚Նեստորին. և Կիւրղին և բովանդակ ժողովոյն բազում պարսաւանաւք, զի խնդիր այլ ոչ ինչ էր ՚Նեստորի աւգնականացն, այլ զի միսանգամ կարասցեն դարձուցանել զնա ՚ի քաղաքն։ Եւ անգիտացեալ Թագաւորին զնենգութիւնն, և զչերթալն նորա յանդիման ժողովոյն. և զլուծումն ՚ի քահանայութենէն, ՚ի թշնամութիւն դառնայր Կիւրղի յընթեռնուլն զթուղթսն. քանզի էր այսպիսի աւրինակաւ։ Եթէ սուրբ և մեծ ժողովս, որ հրամայեցաւ ՚ի ձերմէ ինքնակալութենէդ լինել յԵփեսոս վասն ՚Նեստորի խնդրոյն, քննեցաք և գտաք զսա խոստովանելով նմանապէս վարդապետաց եկեղեցւոյ՝ և աւանդութեան առաջնոցն և հրամանաց գրոց սրբոց. իսկ Կիւրեղ զրպարտող սորա և նախանձաւոր գտաւ։ Առաւել զարմանալ պարտ էր ընդ ամբարշտութեան աւգնականացն, զի կամէին զեղծչել զհամաշխարհական իրսն. զի եթէ ոչ ՚ի մարդկանէ՝ սակայն յԱստուծոյ յայտնեալ լինէր։

Եւ քանզի ոչ ճար կայր զգործեցելոյն ՚ի ժողովոյն ՚ի վերայ ՚Նեստորի՝ գիտութիւն առնել Թագաւորին, շնչեալ ՚ի հոգւոյն սրբոյ Կիւրղի եպիսկոպոսի՝ խորհուրդ իմն սքա-

նի ըստ իւրում իմաստութեանն 'ի միտ արկեալ, եղէգն հերձեալ չափ գաւազանի ունելով, և գրեալ թուղթ 'ի փորուածին եդեալ ընդ է. և ուժեմն իմաստնոյ յառաքինի երիցանց հանդերձս մուրողի զգեցուցեալ, և զայն 'ի ձեռին եդեալ, առաքէ առ մեծն Գրաղմատիոս. որ 'ի ժամանակին յայնմիկ յաշխարհի փայլէր հոգոյն սրբոյ ճառագայթիւք, որոյ քառասնամեայ ժամանակս չէր փոխեալ զոտս իւր ընդ սեամս դրանց խցին իւրոյ՝ յորում ինքն բնակեալ էր. և բազում այլ ինչ վարս ճգնութեան ունէր յանձին իւրում. և հասեալ նա 'ի դրունս վանացն աղաչէր զդռնապանն՝ զի ազդ արասցէ ծերոյն. որպէս եթէ ումն 'ի տառապելոց կամի տեսանել զնա: Եւ չհաւանեալ դռնապանին առնել զայս՝ ո՞վ ես դու՝ ասէ, կամ ուստի՞. ինձ ոչինչ կարելի է առնել զայդ, և քեզ անհնարին է զնա տեսանել: Եւ ո՛չ թողացուցեալ աղաչանաց երիցուն՝ հարկեցեալ լինէր դռնապանն և համարձակի ասել ծերոյն, և նա միանգամայն 'ի լըսելն հրամայէ փութապէս 'ի ներքս ածել՝ ծանուցեալ՝ վասն որոյ եկն՝ աստուածային շընորհիւն: Եւ նախ 'ի տեսանելն ասէ. բարի եկիր տէր երէց. և տուեալ նմա կատարել աղօթս՝ վաղվաղակի զգաւազանն եղեգնեայ

լինել, այժմ անխնայ ձեռն արկեալ կոտորէ գայլաբար, 'ի քո սիրելութիւնդ ապաստանեալ զլի և զանթերի հաւատն շարժել և կիսացուցանել կամեցեալ։ Իսկ հեզն և բարեպաշտօն ասէ, գիտէ տէրն իմ Քրիստոս, զի անգիտանամ զասացեալսդ 'ի քումմէ սրբութենէդ, բայց ծանո՛ ինձ զճշմարիտն, աղաչեմ։ Եւ նորա հանեալ զթուղթն՝ մատուցանէր ասելով. ընթերցի՛ր զայդ, և հասցես 'ի վերայ ամենայնի ճշմարտապէս։ Եւ ընթերցեալ նորա՝ ոչ ինչ յայտնանէ յիմ գիտութիւն եկն՝ ասէ. զի էր գրեալ աւրինակ զայս. եթէ սուրբ և մեծ ժողովս՝ որ յԷփեսոս, որ ըստ հրամանի ձեր ժողովեցաք, առաքեցաք առ Նեստորիոս երիցս անգամ, զի իւրոց բանից խաւսեցելոցն եկեալ յատեան պատասխանի արասցէ. և նորա արհամարհելով զառաքելովքն՝ և ոչ բանիւ անգամ պատասխանի առնելով, վարկեալ հարկաւորապէս գրեցիլս թղթոյն՝ որ առ Կիւրեղ եպիսկոպոսն, և հեռի յեպիսկոպոսութենէ պատուոյն արարաք 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ, որ մինչև ցորոշումն հոգւոյ և մարմնոյ հատանէ՝ անցանէ, և 'ի բաց խզեցաք յամենայն ուխտէ. զոր և քո բարեպաշտութիւնդ հրամայեսցէ լինել արտաքս սահմանաց՝ ոչ մի-

լինել, այժմ անխնայ ձեռն արկեալ կոտորէ զպա-
լաբար, 'ի քո սիրելութիւնդ ապաստանեալ
զլի և զանթերի հաւատն շարժել և կխա-
ցուցանել կամեցեալ: Իսկ հեզն և բարեպաշ-
տօն ասէ, գիտէ տէրն իմ Քրիստոս, զի
անգիտանամ զասացեալդ 'ի քումմէ սրբու-
թենէդ, բայց ծանո՛ ինձ զճշմարիտն, աղա-
չեմ: Եւ նորա հանեալ զթուղթն՝ մատու-
ցանէր ասելով. ընթերցի՛ր զայդ, և հասցես
'ի վերայ ամենայնի ճշմարտապէս: Եւ ըն-
թերցեալ նորա՝ ո՛չ ինչ յայսցանէ յիմ գի-
տութիւն եկն՝ ասէ. զի էր գրեալ աւրինակ
զայս. եթէ սուրբ և մեծ ժողովս՝ որ յԷ-
փեսոս, որ ըստ հրամանի ձեր ժողովեցաք,
առաքեցաք առ Նեստորիոս երիցս անգամ,
զի իւրոց բանից խաւսեցելոցն եկեալ յատեան
պատասխանի արասցէ. և նորա արհամար-
հելով զառաքեալսն՝ և ո՛չ բանիւ անգամ
պատասխանի առնելով, վարկեալ հարկաւո-
րապէս գրեցելոյ թղթոյն՝ որ առ Կիւրեղ ե-
պիսկոպոսն, և հեռի յեպիսկոպոսութենէ
պատուոյն արարաք 'ի ձեռն Հոգոյն սրբոյ,
որ մինչև ցորոշումն հոգւոյ և մարմնոյ հա-
տանէ՝ անցանէ, և 'ի բաց խզեցաք յամենայն
ուխտէ. զոր և քո բարեպաշտութիւնդ հր-
րամայեսցէ լինել արտաքս սահմանաց՝ ո՛չ մի-

այն իւրոյ քաղաքին՝ այլ և այլոց քաղաքաց. զի մի՛ ապականեալ կորուսցէ զոմանս յանփորձից առ հաւատն իւրոյ չարաթոյն վարդապետութեանն:

Զայս լուեալ աստուածասէր թագաւորին՝ զարմացեալ, և սրբոյ ծերոյն պատասխանեալ ասէ. ո՛չ մինչև ցայժմ յայսցանէ գիտութիւն եղև ինձ. այլ սոցին հակառակն: Եւ առաքեն վաղվաղակի յԵփեսոս, զի յերկոցունց կողմանց անդր հասցեն. որք ստուգապէս զգործեցեալսն անդր՝ եկեալ պատմեսցեն. և առաքեն երեք եպիսկոպոս 'ի կողմանէ Կիւրղին, և երեք 'ի Նեստորին: Եւ քանզի գիտէին զՆեստոր 'ի քահանայական իշխանութենէն արտաքս ընկեցեալ, խորհեցան զամենայն ինչ ճարել իւրոյ կողման եպիսկոպոսունքն, զի անդրէն 'ի քաղաքն դարձուսցեն զնա՝ 'ի ձեռն հաւանական և քաղցր բանից պատրել կամեցեալ զառաքեալսն 'ի Կիւրղի կողմանէն. և հասեալ առ թագաւորն՝ սկսան վասն հաւատոյ հարցանել, թէ վասն է՞ր իրիք է վէճումն ժողովոյն, և Կիւրեղ զի՞ ընդդիմանայ Նեստորի, զանգիտութիւն պատճառեալք. զի յորժամ լըսիցեն, յայնժամ ասասցեն ընդ փոյթ. և մեք այդպէս հաւատամք, ըստ որում և ժողո-

մըն, և Կիւրեղ, և 'Նեստոր այդպէս հաւատոյ, և որ ո՛չ այդպէս հաւատայ և խոստովանեսցի, նզովեա՛լ եղիցի ։

Բայց որ յամենայնի նախատեսն է սուրբ հոգին՝ այդ է ատամնաւ ք բանս 'ի բերանս նոցա դնելով՝ զի՛նչ արժան էր խաւսել ։ Եւ զայս պատասխանի առնելով սկսանեին . եթէ զմեզ 'ի սուրբ և 'մեծ ժողովն ո՛չ առաքեցին վասն հաւատոյ վճռման, այլ զհատեալ վճիռն 'ի վերայ 'Նեստորի՝ գրով հանդերձ եսուն ցմեզ, զի կալցուք առաջի Թագաւորին ։ Եւ զայս ասացեալ՝ ընկենուն գրեալսն առաջի Թագաւորին ։ Եւ յորժամ հրամայեաց ընթեռնուլ. և 'ի վերայ հասեալ տրտմեցաւ յոյժ յաղագս Թշուառացելոյն կորստեան . իբրև զմարդասէր և հեզ ջանայր, եթէ հնար ինչ իցէ ապրեցուցանել . և պատուիրեաց միում 'ի սիրելի իշխանացն՝ որում անուն էր Սքողաստիկոս . որպէս թէ՝ հնա՛ր իցէ հաւանեցուցանել զնկեալ եպիսկոպոսունսն՝ երթալ աղաչել զսուրբ ժողովն՝ առ 'ի յընդունել զ'Նեստոր ։

Իսկ նա ելեալ յերեսաց Թագաւորին՝ ըսկաւ իշխանաբար խաւսել ընդ նոսա, ասէ. երթա՛յք՝ խաղաղութիւն արարէք . և զխռովութիւն յեկեղեցւոյ 'ի բաց բարձէք . և զ'Նեստոր ընկալարո՛ւք . զի դարձցի յիւր տեղի . և

իւրաքանչիւր ոք զիւր աթոռ և զեկեղեցի հաս-
տատութեամբ ունիցի ։ Իսկ նոցա պատասխա-
նի տուեալ ասեն. զոր սուրբ Հոգին կարգեաց
և 'ի բաց ընկէց ․ ոչ ումեք հնար է զնա կա-
ցուցանել ։ Յայնժամ զայրացեալ իշխանն՝ ա-
սէ ․ թէ Նեստոր ոչ դառնայ 'ի տեղի իւր
զկնի երից աւուրց , և ոչ ոք 'ի ձէնջ դառ-
նայ 'ի տեղի իւր ։ Եւ մի ոմն 'ի նոցանէ՝ շար-
ժեալ 'ի սուրբ Հոգւոյն ազդմանէ՝ ասէ ․ եթէ
դու յետ երից աւուրց ընդ իշխանս 'ի հրապա-
րակս պերճացիս , ոչ խաչեալն Աստուած է ,
և ոչ մեք նորա եպիսկոպոսք ։ Եւ նոյն ժա-
մայն 'ի սաստիկ ջերմութեան ըմբռնեալ դառ-
նայ յարբունիս մեծաւ տագնապաւ 'ի դուրս
մահու հասեալ , զորմէ լուեալ թագաւորն՝
յառաւել տրտմութիւն ընկղմեցաւ ․ և հա-
եալ առ ոտս եպիսկոպոսին՝ բազում աղաչա-
նաւք մաղթէր , զի մի մինչև 'ի մահ պատու-
հասիցեն զսիրելին , և 'ի կենցաղոյս բարձցեն ։
Իսկ նոցա զանարգելն և զվրիժու պատուհասին
ծանուցեալ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ ասեն , ով
թագաւոր՝ դադարեա յայդմ խնդրոյդ ․ զի մի
և դու ըմբռնեսցիս 'ի պատուհաս նորա յան-
ցանացն ։ Բայց ըմբռնեալն փութապէս վճա-
րի չարաչար մահուամբ զկնի երից աւուրց՝
ըստ ասելոյ ճշմարիտ եպիսկոպոսին ։

Եւ զարհուրեալ թագաւորն՝ աւաքեաց զբոլ

ըստ սուրբ ժողովոյն հրամանի զՆեստոր աքսո-
րել, և Կիւրղի փութապէս գալ յարքունիսն զե-
տեսանել ուրախացին մեծապէս, որպէս և եղե-
իսկ. և բերկրեցան ՚ի միմեանց և արարին խաղա-
ղութիւն ըստ հրամանի թագաւորին ։ Բայց եր
ինչ ստանայր յիշատակի արժանի. այլ վասն
առաջիկային՝ յոր փութամք, այլում ժամա-
նակի թողցուք, եթէ ունիմք փափաքելի թը-
ունոցի գիրել ։.

Արդ՝ զկնի այսոցիկ այսպէս եղելոց՝ դառ-
նայ իւրաքանչիւր ոք յիւր քաղաք ՚ի ժողովելոց
եպիսկոպոսացն. և զառաջինն հաւատ ուղղա-
փառութեան վարդապետն, և ամենայն ուրեք
եկեղեցիք պայծառացեալք ՚ի ձեռն բացափայլ
ճշմարիտ խոստովանութեան վարդապետու-
թեան հարցն սրբոց, աւանդեալ հաւատոն
հաստատութիւն առնոյր, և եկեղեցեաց ման-
կունք սուրբ և աննենգ կաթամբն՝ Աստուա-
ծայնոյն բանիւն սնեալք և աճեցեալք. Այլ զկն
առաջի կայր աշխարհի զմեծ և զանմխիթար
սուգն տեսանել վասն մեղաց մերոց, զկնի սուղ
ինչ ժամանակի երանելին Կիւրեղ հրաժարեալ
՚ի կենաց՝ առ իւր Տէրն հասանէր. զհանգիստն
յերկրի փութացեալ ժառանգել զպսակ, ՚ի
փառս ամենասուրբ Երրորդութեանն Հաւր
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

## ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՅՕՐԻՆԱԿԷՆ

(1) *Յօրինակին այսպէս . պիտի , և 'ի Գիտողորէ ։*

---

Տպեալ է այս դաւանութիւն 'ի մեծէ Ճառընտրէն՝ որ 'ի վանս սուրբ Առաքելոյն Թադէի 'ի Մուշ . 'ի ձեռն Կողոփէկ Յոհաննու Անակրէ Հերմոնի վանից Գրեալ, 'ի ժամանակս հայրապետութեան Տ . և Տ . Կիրակոսի Խորվիրապեցւոյ՝ ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբոյն Էջմիածնի ։

Ի թուին Հայոց ՊՂ . (1441) ։

30

30-00
3136/11 88
E
26 1
1809